



ՄՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆԶԱՅ ԿԱՐԴԱՊԵՏԱՅՆ ՄԵՐՈՑ

Մրբոց Թարգմանչաց տօնը հայ ժողովուրդի ազգային-եկեղեցական տօներն մեկն է: Անիկա կը նշուի Ս. Խաչի տօնին չորրորդ Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը: Կը խորհրդանշէ հայոց գիրերու գիւտը, Աստուածաշունչի հայերէն առաջին թարգմանութիւնը, թարգմանչաց շարժումն ու հայ դպրութեան սկիզբը: Մրբոց թարգմանչաց Վարդապետներուն տօնը հայ ժողովուրդին ամենէն նուիրական եւ սիրուած տօներէն մեկն է:

Հայերէն առաջին թարգմանական գրականութիւնը եղած է Աստուածաշունչը: Ֆրանսացի գիտնական Լա Քրոզ զայն անուանած է «*Թագուհի թարգմանութեանց*»: Թարգմանութիւնը կատարուած է ասորերէնէն եւ յունարէնէն:

Հայոց Այբուբենի գիտէն ետք, Մեսրոպ Մաշտոց կը ձեռնարկէ Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան գործին: Աստուածաշունչ մատենան ամբողջ թարգմանութիւնը եւ վերջնական օրինակը կը տեսէ շուրջ 25-30 տարի:

Աստուածաշունչին գլխաւոր թարգմանիչներն էին Սահակ Պարթեւ, Յովսէփ Պաղնացին, Կորիւն Սքանչելին, Ղեւոնդ Անանդեցին եւ Յովհաննէս Եկեղեցացին:

Հայերէնի թարգմանուած առաջին նախադասութիւնն է՝ «**ՃԱՆԱԳԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԻՐԱՏ, ԻՄԱՆԱԼ ԶԲԱՆՍ ԶԱՆՃԱՐՈՅ**» նախադասութիւնը: Հոս՝ «Իմաստութիւնը» քրիստոսն է, բանն Աստուծոյ, իսկ «հանճարին խօսքերը»՝ Ս. Գիրքը: Այս նախադասութիւնը քաղուած է Սողոմոն Իմաստունի «Առակաց» գիրքէն:

ՊԱՏԱՍԽԱՆԷ՛:


1. Ամեն տարի ե՞րբ կը նշուի Մրբոց Թարգմանչաց տօնը:
2. Ո՞րն է հայերէն առաջին թարգմանուած գիրքը: Ի՞նչ կոչուած է:
3. Ս. Մեսրոպ Մաշտոցի կողքին որո՞նք են Աստուածաշունչին գլխաւոր թարգմանիչները:
4. Յիշէ՛ Հայերէնի թարգմանուած առաջին նախադասութիւնը:
5. Հայերէնի թարգմանուած առաջին նախադասութեան մէջ ի՞նչ իմաստով գործածուած է «Իմաստութիւն» բառը:



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ ՈՒՍՈՒՅԻՉ ՎԱՂԱՐԵԱԿ ՆՈՐԵՆՑ

Մեր ինքնուրոյն գոյութեան կռուանները երբեք
Երեսունվեց գամերով կեանքին ամուր զօղեցիր,
Սին եւ կանթեց տուիր դուն հայ տանը, հայ մարդուն.
Բաբբի՛, դուն մեզ տուիր յաւերժելու ուղեգիր,
Ոգու զարթօնք եւ սնունդ, մտքի թռիչք մշտարթուն՝
Պապենական յարկի տակ կամ աշխարհի մէջ ցանուցիր:

Մագաղաթը ամենէն ամուր պարիսպը եղաւ մեր,
Այլ եւ փետուր-գրիչը՝ անկոտրելի եւ յաղթ սուր...
Շարականի, աղօթքի մէջ է հանճարդ անաւեր՝
Տառապանքով քու երկնած կեանքիդ խորհուրդն է անսուտ
Որ պահեր է դարերով ժողովուրդին մեր անմեռ...
Տարդ կաս եւ դո՛ւն, ուսուցի՛չ, հանճարեղ այր՝ դարձած սուրբ:



ԻՐԱՔԱՆՉԻՐ ԲԱՌԱԽՈՒՄԲԻՆ ՄԷԿ
ԺԻՏԱԿԱՆ ՆԱԽԱԾԱՆՑ ԿԸ ՅԱՐՄԱՐԻ:
ԽՄԲԱՒՈՐԷ՛ ԶԱՆՈՆՔ ՅԱՐՄԱՐ ՍԻՒՆԱԿԻՆ
ՄԷՋ:

գէտ հաս կար հաճ	կամ աստուած ունեւոր խօսկան
գործ համ գոյն խելք	օրէն(ք) ազգային երախտ երջանիկ

ԽՄԲԱՒՈՐԷ՛ «Ր» ԵՒ «Ռ» ՏԱՌԵՐՈՎ ԳՐՈՒՂ ԲԱՌԵՐԸ:

գա_նան, հ_չակ, գա_նել, կա_չիլ, ու_ճանալ,
վ_ինչ, վե_նատուն, կ_թնիլ, կ_նալ


Ք	Ռ

Խողմի
Վիղբսի՛ ՚ղոստողմզի՛ ՚ձղվմի՛ ՚Ռողոցսս ՚Վ՛ձստի՛
՚Ղղվմոն՛ ՚իմ՛ձսս ՚ղողմոն՛ :մզղղողմոլոտոտո

Պատասխաններ:

իվնոմձմզիոմ տոլմմզիոմ ղվմոննոմոմ ղձմոմ	մլզղղոմ ղնսնոմ լոմզոմ զմսնոմ
ղոմիոսվ՛ մսզղղս՛ զոմստոմ՛ լոմի՛ձ	չոմզս մոմիտ ոմզս տձնտ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ
ԴՊՐՈՑՆ ԱՅԱ...
ԺԱԳ ՅԱԿՈԲԵԱՆ



Դպրո՛ցն ահա հայկական... Մեսրոպակոփ ապառաժ՝
Կ'ամբարտակուի դարերու անծայրածիր դաշտին վրայ,
Ու հեղեղին դեմ անոնց՝ կաղնիօրէն կուրծք կու տայ,
Կոթողուելու անյողդողո՛ղ՝ հողմերուն մէջ յարաշարժ:

Դպրո՛ցն է հոն հայկական... Մեսրոպասի՛ն ապարանք՝
Հազար գանձով ու զարդով ու զրահով կը փայլի,
Ու կը նայի Գալիքին՝ յոյսէ աչքովն անցեալի,
Որուն մէջէն կը ժպտին երկու Սուրբեր սպիտակ:

Դպրոցն, այնտեղ, Սահակի պարթեւ հասակը ունի,
Որ իր ստուերն հայրական դարե՛րն ի վեր կը սփռէ.
Եւ ան ունի Մեսրոպի հարուստ ճակատը լուսէ,
Ճաճանչն որուն կը ճախրէ աստղերն ի վեր յաւերժի:

Դպրո՛ցն ահա հայկազեան... Մեսրոպակո՛ւռ զինարան՝
Իր բովին մէջ կը ձուլուին սո՛ւրն ու ասպա՛րն հայ հոգւոյն,
Մինչ կատարին՝ ծագէ ծագ կը ծածանի երեսուն
Եւ ութ երփնեան դրօշակն Այբուբենին Մաշտոցեան:

Խորանն է ան՝ ուր խոհուն Խորենացին կը խնկէ,
Պարտե՛զն՝ ուր սագ ու սրինգ կը գլգլան քուչակեան.
Ան երգեհո՛նն է՝ զոր խօ՛ւ կ'ալեկոծէ Վարուժան,
Անտա՛նն ուր քա՛ջ կը շաչէ Սիամանթոն մրրիկէ:

Դպրո՛ցն ահա Մեսրոպեան՝ նաւու մը պէս վեհափառ...
Բեռցած նշխարն անցեալի ներկայ փառքն Հայ Գիրին,
Առագաստներն իր պարզած իբրեւ երամ աստղային,
Ճաճանչնօրէն կ'ընթանայ դարերու մութ ծովն ի վար՝

Լուսէ ցռուկը մխած արեւուն մէջ ապագայ:

ՊԱՏԱՍԽԱՆ՝ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՈՒԴ

ԻՆՉՈ՞Ւ ԿԱՏՈՒՆԵՐԸ ՋՈՒՐ ՉԵՆ ՍԻՐԵՐ

Կատուներուն նախահայրերը կ'ապրէին ափրիկեան չոր շրջաններուն մէջ եւ անոնց որսերը ցամաքային էին: Հետեւաբար, անոնք պետք չունէին ջուրի աղբիւրի մը մօտ երթալու՝ ջուր խմելու համար, այլ իրենց ջուրը կը ստանային իրենց ուտելիքէն...



ԻՆՉՊԵ՞Ս ԿԸ ԲԱՆԻ ԻՆՔՆԱՇԱՐԺԸ

Ինքնաշարժները իրենց ուժը կը ստանան իրենց մեքենան աշխատցնող վառելանիւթի ուժանիւթէն. այդ վառելանիւթը կրնայ ըլլալ կազ, էլեկտրականութիւն կամ երկուքին խառնուրդը:



ԳԻՏԵԻ՞Ր, ԹԷ...

Այժմ Ափրիկէի մէջ կ'ապրին տակաւին 400 հազար փիղ: Այսինքն՝ մէկ փիղ իւրաքանչիւր 15 հազար հոգիի համար:

